

ՀԱՅՐԵՆԻՔ

40 ՓԱՐԱ

40 ՓԱՐԱ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Կիրակի օրեր: Տարեկանն է կամ խիստ
Ա. ամսականը բաժանարարաբար համար մէկ օգնական աս-
կի • խիստ Բ. ամսականը համար կէս օգնական ասկի • Դուրս գա-
ցածներուն ծախքը տանուլին վրայ է: Երկու շաբաթ անցած ի-
ւեր կը ծախուին 3. դր: Երեսուցական բաղադրող համար 30
Ֆրանկ: Համար 40 փութաւ:

Նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել առ Խմբագիր-Տնօրէն
Մ. Կոմիտասեան Կ. Պոլիս Երեմի Բամի Զիւլի-բազար Կարապետ
Պիտիկեան Տպարանի կամ Պանն գարու ջրախաչու Պօլոս Է
Յակոբ աղայից խանութը: Անվան ծայր եւ համակ կը մեքտայն.
Ղեկավար եւ չի տրուիր: Ծանուցման տողը մէկ տեղումի հա-
մար 3 դր. է: Աւելի անգամներու համար օտարական իջնող:

ԹԻՒ 15

ԿԻՐԱԿԻ

1887 ՍԵՊՏԵՄԲԵՐ 27

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. Տեսութիւն. — Միջոց. —
Օտարների կեանքին. — Պատկանեան եւ
ձերբակ. — Ազգ. հիւանդանոց. —
Հայկին. — Զմիւռնական գործեր. —
Զուարճար. — Ազգ. Լուսեր. — Վեդ
Ժուլիուտ-Բնասանքի գործի ձեռք:

ԱԶԳԱՅԻՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեղեաց եօթներկն մէջ հատար-
ուած գործն է Բազ. Ժողովոյ ընտ-
րութիւնը:

Ամեն. Ս. Պատրիարքն այս շուր-
թու հրապարակի գրկեց, բայց ըն-
տըրեսայր հրաժարականու պատուա-
խանեցին:

Ն. Սրբադատութիւն հարկու պիտի
կրկնէ իւր հրուեր:

Փախապելի է անշուշտ որ ընտըր-
եալը լիցանին իրենց պաշտօնը,
եւ չարհին իրենց հրաժարականի
վրայ, որ արդի պարագայից մէջ խիստ
անողատն է, թէ եւ վշտանալու իրա-
ւունք ունեցած իսկ լինին:

Դժբաղդաբար նոր ընտրեալը եթէ
պիղծն, հարկ պիտի լինի նոր ընտ-
րութեան ձեռնարկել եւ այս առթիւ
թերեւ հին կամ նոր առաջարկու-
թիւններ երեւան դան:

Սակայն ազգային կարեւոր խնդիրը
կրնան տրուել:

Աւելի է այդ հարց, որ հարկու
չվերաբերի ոչ բողոքողաց եւ ոչ ալ ա-
ռաջարկութեանց տէրերու:

Օգոստ. 25 թուականու Տիգրա-
նակերտէ Արեւելքի մէջ լիցանեցու-
թիւն մը մի տու մի կը հաստատէ ան-
դակուն գործաց վիսարեւմտե մեր հը-
րապարակութիւնները:

Այլ նա ընտ աւարակոյս շնոր թէ
Տիգրանակերտի կրօնավարութեան
խնդիրը հայի, ազգայնութեան եւ
նեղութեան հետեանց խնդիր է:

Պարտինը յարել թէ միայն Տիգ-
րանակերտ չէ որ այս վիճակին մէջ
կը դանուի. ո՛ր որ կրօնավարութեան
խնդիր կ'ենի, հոն ժողովուրդը
կամ նիւթապէս տուտողեալ է եւ կամ
կուսակցական պայքարներ կան:

Այս վերջնայ օրինակը տուաւ Վան.
Երկրորդ օրինակը կուտայ Եւգոնիտ,
ուր 8 ամե է իվեր բանակու խորը
կը տաւապին 12 ազգային 11 է մին-
չի 60 տարեկան անձինք, որ անխից
ազգայիններու, զբաղմունքութեան զոհ
գնացած են:

Գրգռիչ լինելու ամբաստանու-
թեան ներքե կը գտնուին այդ խեղ-
ճերը, միջոցեւ ոչինչ չէ հաստատ-
ուած իրենց վրայ, ինչպէս որ վիա-
յած են Սեբաստիոյ Վան. Կուսակալին
եւ Ընդհանուր գաղութապետը:

Անբաւարկ ամբաստանութեանց
քննիչ աստեղծն անպարտութեան վր-
ճիւ, տալու համար թիվոց տաւարմա-
նը կ'ապառնէ, որ հոս զրկուած են
պաշտօնական թարգմանութեան հա-
մար:

Այս գործողութիւն յապաղած է
եւ այս պատճառաւ խեղճերը բանա-
մէջ կը տաւապին դեռ:

Ի՞նչ կ'ընէ արդեօք մեր Պատրի-

արարանի Դործակատար Էֆենտին.
ինչո՞ւ օտարազգիան գիտնենք չընել,
եւ, սրտ որ անկ է, ինչո՞ւ գիտութիւ-
նը ու կարեկցութիւնը չհայցել:

Այսպիսի դժբաղդ, պարագայից
մէջ ո՛ր եւ է յապաղում, գանդ ազաւ-
թիւն եւ զանցաւթիւն ծանր հետեւ
ւանաց պատճառ կը լինին:

Բանտարկեաց միայն հայրը եւ եր-
կու պատմեցաւ այ հայրը տու միջ-
տին եւ կոխմանց յանկարծման եղած
են եւ ամենք սը հիւանդ:

Բանտարկեալը ողբում են եւ կու-
րոտ օրապահիկի:

Աղետը սակայն հոս չվերջանաւ:

Տեղւոյն Կոթմայիկաց Դերասանա-
ւոր իւր միջնորդութիւնը խոտապել է
այնու պայմանու որ եթէ ընդունին
կոթմայիկ կրօնը եւ գիտնամ ընեն Սպար-
եան Սրբադատի:

Բանտարկեաց ծնողը եւ պարագայը
յանձն տուեր են, բայց ազգ եղիկ աղ-
գայնոյ մը միջնորդութեան եւ Գեր. Տե-
ղապահ հօր ջանից շնորհիւ կրօնավար-
ութեան վտանգն աւ ոյցմ գաւ-
րած է:

Գեր. Սահակ վարդապետի զոր-
ճանէութեան եւ ուղղամտութեան
դոհմանակութիւն կը յայտնեն:

Զմիւռնի խնդիրն այ երկարաճըզ-
մանի կրնայ ծանրանալ, ինչպէս որ մեր
ընդունած նոր տեղեկութիւնը կը
յայտնեն:

Բաժանեալ կուսակցութեանց մէջ
դիրքով, ազգեցութեամբ, ազգաօր-
ութեամբ եւ նիւթակաւ ու բողոքա-
կան ծաւալութեամբ նշանաւոր ան-
ձինք կը գտնուին:

Մենք երկու կողմին վրայ ալ կատարեալ վստահութիւն ունինք և կըրնանք ապահով լինել թէ անձնական կրից և սխալալուծեան պատճառաւ չեն յուզուիր ու չեն յուզեր փոքրոգի անձնաւորութիւնք չեն, որ պէտքի վրիժառութեան համար հանրային շահուց և օգտին վնասեն :

Ինչ որ ալ լինի, քննութիւնն անհրաժեշտ է, զոր կը պահանջեն երկու կուսակցութիւնք միանգամայն :

Ըսել է թէ երկու կողմն ալ վստահ է իր պաշտպանած դատին վրայ :

Մենք այս խնդրոյ վերաբերմամբ հրատարակեցինք երկու կողման առաւելութիւններն ալ որպէսզի լուսաւորուի աստիճանայ Նարձիքը և ազգային պաշտօնական մարմինք վերահասու լինին :

Այլ շարունակենք մեր այս ընթացքը, զոր կը պահանջէ անկողմնակալ հրապարակագրի պաշտօնը :

Եւ երբ մենք անթերի կը կատարենք մեր պաշտօն, ազգային պաշտօնական մարմինք ալ ի հարկէ թերանայր չեն իւրեանց պաշտօնի մէջ, անշուշտ երբ մը տալով այս խնդրոյ, որոյ երկարած գումը չկրնար հաճելի լինել և ոչ մի տեսակէտով :

Թէ և անագան, այլ դժգոհացիչ է որ մեր Ազգ. Պատրիարքարանն հուսկ ապա շարժեցաւ ի նպաստ Զէյթունի և Իւսկիւտարի հրկիզելոց միջոցներ ձեռք առնելու :

Թաղերու մէջ հանգանակութիւնք փութալնութեամբ կը կատարուին յօդուտ Իւսկիւտարու հրկիզելոց :

Զէյթունի հրկիզելալ եկեղեցեաց, վարժարանաց և ազգային կալուածոց վերալինութեան Գանձնաժողովը ձեռնարկած է իւր պաշտօնին :

Ամեն Հայու՝ ո՛ր որ ալ գտնուի նուիրական պարտականութիւնն է յօժարակամ մատուցանել իւր մարդասիրական ու ազգասիրական նպաստ յօդուտ հրկիզելոց՝ առանց երբեք կարեւորութիւն տալու այս մասին Մանդուկի բարբառնաճառը, որովհետեւ այդ սկերքս թերթը միայն իր կիրքն յագեցնելու համար կը մտաէ իր էջերը, ինչպէս որ ըրած է մինչև հիմա :

Զմեռը վերահաս է. կորսնցներու ատեն չկայ. յապաղումը մեծ վնաս կը պատճառէ. գործնական ազգասիրութեան ժամանակ է, գործելու և ոչ թէ խօսելու ատեն է :

Այն է ճշմարիտ ազգասէրը՝ որ թշուառաց օգնելու համար հրաւերի չսպասեր և նազանք ու դիտողութիւն չըներ :

Այս կարգի պարագայից մէջ օրինակ առնենք Եւրոպական ազգերէ և Յոյներէ :

ՄԻՋՈՑՔ

Մինչև հիմա մեր գրածները կուգան հաստատելու և ինչպէս որ առ խուր փորձերն ալ կը ցուցնեն՝ թէ մեր ընթացքն ու դրութիւնը բաւական չեն դժբաղդաբար զԱզգն առաջնորդելու և մեր Եկեղեցին պահպանելու հանդէպ մարդորսաց՝ որ որսալու համար ամեն դիւրութիւն ունին, այսինքն, հրահանգեալ քարոզիչներ, ձրի կրթութիւն, դրամ, պաշտպանութիւն և ազգեցութիւն :

Մենք ինչ ունինք :

Թողունք նշանակել մի առ մի թէ ինչ չունինք, այլ ցուցնենք թէ ինչ պէտք է ունենանք և ինչ պարտինք տալ դաւառաց :

1. Տեղական պիտոյից ու պահանջմանց համաձայն վարչական կազմակերպութիւն :

Առ այս առաջին հարկաւոր բանն է նուազեցնել առաջնորդաց թիւն, հաստատել արքեպիսկոպոսարանական դրութիւն, միացնել վանահայրութիւններն ընդ առաջնորդութիւնս, վանքերը ծառայեցնել իրենց բուն նըպատակին և արքեպիսկոպոսական պաշտօնի կոչել այն կարգի եկեղեցականներ՝ որ ունենան քիչ չափ վարչական կարողութիւն, տեղական կառավարութեան յարգանքն ու վստահութիւնը վայելելու համար զիրք և մշակեալ յարաբերութիւն մտայնելու համար կորսվածութիւն :

2. Կարելի եղածին չափ մանաւանդ ի դիւզօրէս ձրի դաստիարակութիւն ծառայելու համար միջոցներ :

Այդ միջոցներ են Կրթական՝ Միացեալ, Աստիկան, Խիզանու, Ազգանուէր-Հայուհեաց և Գարոցասէր-Տիկնանց Ընկերութիւնները, որոց պարտաւոր լինի ամեն Հայ՝ թէ աստ, ի դաւառու և թէ արտաստահման նպատակ :

3. Տարածել ի դաւառու այն լըրագիւրներ՝ որ Ազգային-Եկեղեցեաց պահպանման համար օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն ու մասնանիչ կ'ընեն այն մեծ փառներ ու վտանգներ՝ զորս ճիշդութիւն և Ամերիկայի միտիոնարք զանազան միջոցներով, այն է խորհուրդեամբ, կեղծաւորութեամբ, թակարդներով, խորամանկութեամբ ու այլ և այլ հրնարքներով կը հասցնեն :

4. Ազգային վարչութեան տըրամադրութեանը ներքեւ ամեն տարի դնել կարեւոր դումար մը յատկացեալ միայն կենսական պիտոյից համար :

5. Հաստատել աստ և թէ ի դաւառու ազգատախտամբ ընկերութիւններ ազգատանքն ու անկարողները խնամելու համար :

6. Իւրաքանչիւր դաւառապետութիւն վանքի մէջ հաստատել մէյ մէկ երկրորդական վարժարան :

7. Աշխատել ու յորդորել կարող ազգայիններն յօդուտ ազգային կենսական պիտոյից կտակ ընելու, ներշնչելով առ այս այն ամեն վստահութիւն և հաստատելով հիմնական օրէնք մը կտակներու համար :

8. Որ առաջինն է. Կեդրոնական վարչութեան տալ մի այնպիսի կազմակերպութիւն, որով իւր օր լինի Ազգ. վարչութիւն և ոչ թէ Պօլսոյ Հայոց վարչութիւնը :

Առ այս հարկաւոր է գործոյ բաժանում :

Ասոնք անհրաժեշտ միջոցներ են որ կրնան վտանգն անհետացնել, և անշուշտ բանաւոր քաղաքականութիւնն այն է որ մարդու գէմ մարդ և միջոցի գէմ միջոց կը յարուցանէ :

Տկարութեան և անկարողութեան մեծ նշան են լայն ու դանդաղ որ հարկաւ այս մարդու գործեր չեն :

Մենք պէտք է որ իւրեւ Հայ պահպանենք մեր ազգութիւնն ու Եկեղեցին և պահպանելու համար գործենք միայն :

Այս կետէրու վրայ մտածաւորապէս ուշադրութիւնը կը հրաւիրենք Ամեն Ս. Պատրիարք Հօր, ու պարտի շարժման ու գործի գլուխ կանգնել, ներշնչելով ու ազդելով :

Զ Ե Կ Ո Յ Յ

Կը ցաւինք որ հակառակ մեր խօստման՝ այս անգամ եւ չկրցինք հրատարակել Պատմական յօդուածոց շարունակները՝ միայն տեղւոյ անձկութեան պատճառաւ :

ՕՏԵԱՆԻ ԿԵԱՆՔԷՆ

(14 Թ. Ե)

Օտեան բառին բուն նշանակութեամբն էր աղատամիտ :

Բնաւ չէր յաւելուէր ու չէր դրժուէր երբ տեսնէր մի դուռն ուր քրննադատէր զիւր պաշտօնական գործ կամ կարծիքը :

Կը կարգար պաղ արեւմուտ, իրաւունք կուտար՝ եթէ արդար գտնէր եւ կը յայտնէր զիւր հաւանութիւն, զի չէր յաւանանք կարծել թէ ինք անտրտաշարժ է եւ իւր գործ անքննադատելիք փակ կը պատասխանէր, եթէ ինք իրեն հր վիճաբանելի, զի յարգող էր Կարծեաց Աշխատութեան :

Բայց չէր զգածուէր ու կարեւորութիւն տար այն դրուածոց՝ որ լինէին թշնամանք եւ հայհոյութեամբ, այնպէս որ կարծես թէ իրեն համար զըրւած չլինէին, եւ ոչ իսկ կը կարգար ու ձեռքը կ'առնուէր : Թո՛ղ Հասարակաց Կարծիքը լինի կ'ըսէր դատաւոր :

Մեզո՞ւմ մը 1869ին միամետայ դադարման դատապարտուեցաւ Մանգլումէ, որը սրանչացողներէ երկու անձ զնային միջնորդութիւնը խնդրել հրատարակութեան համար :

Օտեան պատասխանեց՝ Այդ լըրագիր ինձ համար արդէն դոցուած էր :

Յիշեալ լրագիր կը գրէր Եկեղեցիին դէմ, կը պղտորէր Ժողովրդեան միտքը եւ կը թարգմանէր Ռընանի «Վարք Յիսուսի» գործը, որ լինէր ամբարշտութեամբ :

Ողբացեալն Ներսէս գրեց առ ողբացեալն Օտեան դարմանի համար նոյն չարեաց՝ որ աղէտ կ'սպառնար :

Օտեան յայտնեց զիւր կարծիք՝ Մամուլ համար կամ բացարձակ սեղմում հարկ է կամ բացարձակ աղատութիւն :

Առաջինն անկարելի է, ըսաւ, ինն եւ տասներորդ դարու մէջ. չարիք մը դարմանելու համար պէտք չէ առաւելագոյն չարիք մ'ստեղծել :

Իսկ բացարձակ աղատութիւնը բանաւոր միջոցը կը համարէր չարիքը դարմանելու համար :

Այդ կրկին նամակներ հրատարակուած են Մասիսի մէջ կարծեմ 1864-65 թին :

Վերջապէս, Օտեան իբր պետական մարդ՝ իւր անձնուէր հաւատարմութեամբ ծառայած է առ Օտմանեան բարեխնամ տէրութիւնն, իբր ճշմարիտ ազգասէր՝ պարկեշտութեամբ ու անշահախնդրութեամբ ծառայած է Ազգին, իբրեւ վարչական մարդ՝ խիստ տաղնապալի ու փափուկ ժամանակաց մէջ մեծ գործեր տեսած է, իբրեւ դըրական մարդ՝ հիացում եւ սրանչացում պատճառած է իւր վսեմ գաղափորներով ու գեղեցիկ ակզբունքներով՝ եւ իբր Երեսփոխան՝ փառքն եղած է Ազգ. Ժողովին :

Օտեան էր նաեւ բարեպաշտ հաւատացեալ եւ իւր ոկղբունքն էր կըրթել Ժողովուրդը ի հաւատս լուսաւոր գաղափարներով :

Իւր սիրտը կը բարձրէր բարութեան համար. քսակն ազրաթին էր եւ կեանքն Ազգին ու աւերութեան :

Չէ եղած երբեք գոռոզ կամ ամբարտաւան. կը խօսէր ամենուն հետ որ համակարծիք լինէին իրեն կամ հակակարծիք, հարուստ կամ ոչ, եւ անսնք որ սրտի ու արժանեաց տէր էին՝ կը կոչէր իր բարեկամները, կը խորհրդակցէր, կ'ուսուցանէր, կը պատրաստէր, կ'առաջնորդէր, կը ներշնչէր ու կը քաջալերէր՝ եւ իր մեծութիւնը կը փայլէր խոնարհութեանը մէջ :

(Մահացած յաւերքով)

ՊԱՏԿԱՆԵԱՆ ԵՒ ՃԷՐԻՅԷ

Ոմանց ցատումն ու զայրացումը իսկ ընդհանուրին արհամարհանքը կը շարժեն ձէրիտէի-ճարգիլի անխնայ հրատարակութիւնները վերաբերմամբ յարգելի Բանաստեղծ Պ. Ռ. Պատկանեանի, որ կը վայելէ ընդհանուր Ազգին սէրն ու համակրանքը վա՛ն այն բանաստեղծութեանց՝ որ կը խօսին ժողովրդեան հոգւոյն, սրտին ու զգացմանցը :

Չենք գիտեր եւ չենք ուզեր գիտնալ ձէրիտէի այս անաղնիւ ընթացքին շարժառիթը, բայց սա շատ աղէկ զիտենք թէ այդու չշարժիր Պ. Պատ-

կանեանի՝ այլ կը շարժի ազգային զգացմանց դէմ :

Եւ ո՞վ է այն որ ազգային զգացումը վերաւորել յանդգնի առանց անպատուհաս մնալու :

Մանգլումէ պատժուեցաւ, ու պիտի մնայ պատժեալ՝ ցորչալի յարատեւէ իւր ընթացիցը մէջ :

Ձէրիտէ ինչ ինչ պատճառներով արդէն հրաւիրած է իր վրայ ազգայնոց մեծ մասին տհաճութիւնը :

Օր մ'ալ, եւ ո՞վ իտէ, գուցէ մօտ օրէն Մանգլումէի կարգն անցնի, եթէ փորձուի դարձեալ ազգային զգացմանց հետ խաղալ ու զայն վերաւորել :

Ձէրիտէ եթէ կը յաւակնի ճանչուիլ իբր ազգային թերթ՝ պարտի յարգել ազգային զգացումը :

Մահաբաժնոյ է այս պայման, եւ ինքքն՝ ձէրիտէ պարտի խորին ու չաղուութիւն ընծայել, որովհետեւ իր զոյտութեանը մոռնող մատակարարները մեծ մասամբ Հայ են ծագմամբ, Հայ՝ կրօնքով, Հայ՝ սրտով եւ Հայ զգացմամբ :

Հայ-Ազգն յարգած է ու կատարելապէս կը յարգէ խղճի աղատութիւնը, ուստի դիտնալով հանդերձ թէ՛ Ալիշան, Բագրատունի, Հիւրմիւղ, Պէշիկթաշիան, Թէրզեան, եւ այլն Կաթողիկ կրօնին կը վերաբերին, զայս պարագայ բնաւ պատճառ մը չէ՛ նշկատած չայտնելու համար իւր անհուն սէր, յարգանք, հիացում եւ համակրութիւն առ յիշեալ ազգայինս :

Դէթ տարրական քաղաքավարութիւնը կը պահանջէ որպէսզի ձէրիտէ զգուշանար Պ. Ռ. Պատկանեանի վերաբերմամբ անաղնիւ հրատարակութիւններէ, որք չեն հարկաներ յիշեալ մեծանուն Բանաստեղծին, այլ կը հարկանեն ազգային զգացումը :

Ձէրիտէ եթէ կը յաւակնի տակաւին իբր ազգային թերթ ճանչցուիլ, պարտի իւր ընթացքն համաձայնեցնել ազգային զգացման, որոյ դէմ խիզախիլ ոչ ումեք ներելի է :

Իսկ եթէ առ ոչինչ զրէ զայս պայման, իր անկումը ինք կը փութացանէ : Թո՛ղ օրինակ տուու Մանգլումէն :

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

. . . Խմբագիր Տէր .

Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն լի դոհութեամբ կը փութայ

յայտարարել թէ, Մեծապատիւ Պօղոս պէյ Աշըղեան իւր ծանուցեալ բարեպաշտութեամբ բարեհաճեցաւ նուիրել 50 դարբիւզ բրինձ ՚ի նպատակ հաստատութեանս :

Մեծ. Աշըղեան էֆէնտի սոյն վսեմ և բարի գործն, որ իւր մարդասէր զգացմանց յատկանիչն է, Հոգաբարձութիւնս քաղցր պարտաւորութիւն կը համարի ներկայիս իւր ամենախորին շնորհակալքն յայտնել, հաւաստի լինելով որ նորին Մեծապատուութեան սոյն օրինակելի գործն իւր հետևողներն կ'ունենայ ի միութարութիւն պատասխարելոյ :

Խնդրեմք, . . . Խմբագիր Տէր, որ հաճիք ներկայս հիւրընկալել Ձեր յառաջիկայ թուոյն մէջ :

16 սեպտ. 1887

Մնամք յարգանքօք

՚ի գիմաց Հոգաբարձ. Աղղ. Հիւնդն.

Ատենադպիր Ատենապետ

Յ. Անէրճեան Մ. Յակոբեան

ՀԱՅԵԼԻՆ

Կոյր ազնիւն հը յիշատակարանը

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Դու, սիրեցեալդ իմ Անայիս, դու կուզես որ ես քեզ գրեմ, ես, թըշուառ կոյրս, որոյ ձեռքը դիշերուն մէջ թափառեալ կ'ընթանայ. - չե՞ս ահարկելի միթէ խաւարի մէջ ծրագրած նամակներէս . . .

Ձե՞ս սոսկաւ միթէ մելամաղձաւ մտածութիւնքէ՝ որք կրնան յարձակիլ իմ վերայ :

Բարի Անայիս, դու երջանիկ ես, դու ինչ պէտէս. տեսնե՛, ո՞հ, տեսնե՛, կարենա՛լ զանազանել երկնքի կապոյտը, արեգակնայն դոյները, և ուրիշ այլ և այլ դոյներ, որպիսի հաճոյք, և ո՛րչափ գեղեցիկ բան, Աստուած իմ :

Լաւ գիտեմ թէ ես ալ վայելած եմ այդ առանձնաշնորհումը. հազիւ տասը տարեկան էի երբ կուրութեան ախտին ենթարկուեցայ. - Այժմ քսան ու հինգ տարեկան եմ. - տասնեւհինգ տարինքէ ՚ի վեր չորս բոլորս սե է ինձ համար . . .

Ի դուր կը ջանամ, նազիկդ իմ, մտաբերել բնութեան հրաշալիքը, որոց և ոչ մէկուն դոյնը կը յիշեմ, վարդի հոտը և շօշափելով նորա ձեւը

կը դուշակեմ, բայց նորա այնչափ դուրսած դոյնը, որոյ կը նմանցնեն բոլոր գեղեցիկ կիները, մոռցած եմ, կամ, լաւ է ըսել՝ չեմ կրնար նկարագրել, ձայն մը կը կրկնուի, աչքեր միայն կը պակսին հէք աղջկան :

Մերթ ընդ մերթ այն միտպատ խաւարի մէջէն, ո՛ւր կը շարժի իմ խեղճ միտքը, տարօրինակ աղօտնայններ կանցնին. . . բռնիք կը յարեն թէ այդ տրիւնն է և իրիկ թէ իրենց արհեստին փոքր ինչ յոյս կուտան. - Խաբէութիւն : Խառնահինգ տարինքէ ՚ի վեր կորուսած պայծառութիւն որով կը հարստանայ երկիր՝ պարտիմ այլ ևս տեսնել յերկինս :

Անցեալ օր մի քանի վայրկեան յուզում մ'ունեցայ : Խարխալելով սենեկիս մէջ, ձեռքս դրի մէկ . . . ո՞հ, բան մը զոր չի պիտի կարողանաս դու չափել . . . հայելիի մը վրայ : Ընդ առաջ նստայ՝ պլանիք մագիլոս շտիկելով : Ո՞հ, ո՛րչափ կուզէի զիս տեսնել. տեսնե՛լ՝ զիտնալու համար թէ սիրո՞ւն եմ, թէ մո՛րթս վառիկութեանը չափալ ճերմակ է, և թէ, իմ այդքան երկայն յօնքերուս ներքե գեղեցիկ աչքեր կան . . . Սա՛ղ, դպրոցէն մէջ ոտեղ կըսէին թէ սատանան կուգայ այն աղջկանց հայելոյն մէջ որք շատ կը նային տնոյ մէջ : Արդարեւ, եթէ եկած ըլլար պիտի բռնուէր նորին Սաղայելական մեծապատուութիւնը, զի չի պիտի տեսնէի զայն :

Քու սիրալիր գրութեանդ մէջ կուզես զիտնալ թէ արդեօք ինձ կարթային որ պահպանեմ անանկութիւնք իմ ծնողաց աղքատութեանը պատճառ եղեր է : Այդպէս բան ես չըլտեցի : Իմ ծնոյքս հարուստ են, վասն զի ոչ միայն հարկաւորէն այլ աւելորդէն իսկ շրջապատեալ եմ. - Ուր տեղ ձեռքս դնեմ՝ թափելի և մետաքսի, ծաղիկներու և թանկագին կերպասներու կը հանդպի . . . Գերբնաիր կերպուրք սեղանին վրայ կան պատարտ և ամեն ինչ համադամէ՝ որ ինձ շնորհում է. ուրեմն, սիրեցեալդ իմ Անայիս, ինչպէս որ կը տեսնար իմ կեանքիս պաշտեցեալ հեղինակներուն շնորհիւ երջանիկ բարեկեցութիւն մ'ապահովեալ է :

Դրէ ինձ, գեղանիդ իմ, վասն զի վերջապէս վերադարձար Անդլիայէ, աղնուսհիդ, և վերք ինչ գթութիւն ունիս ինձ կոյր աղջկան մը :

ԶՈՒՍԱՐՃԱՆԻՔ

Աղգային հիւանդութիւնք

Երբ տեսնես թէ սե է ըսէ ճերմակ ու պնդէ, ինչ որ ճերմակ է կ'ըսէ Սրբաւեր ու կը հաստատէ : զիտցիր որ աղգային հիւանդութիւն է :

Երբ տեսնես թէ Սրբաւեր իր վրայ շատ կը խօսի, մի՛ մեղադրեր, աղգային հիւանդութիւն է :

Երբ տեսնես թէ եկեղեցական մը առաջնորդ կ'ընտրուի գաւառէ մը և կը հրաժարի, մի՛ սրամտիր, աղգային հիւանդութիւն է :

Երբ լսես որ վարդապետ մը առաջնորդ ըլլալէ և յիշատե՛հն եպիսկոպոսանալէ յետոյ՝ օղին ու կլիմային պատճառաւ հրաժարեր է, մի՛ զոյրանար, աղգային հիւանդութիւն է :

Երբ տեսնես մէկն որ չհեռանար աղգային պաշտօններէ, մի՛ կասկածիր. աղգային հիւանդութեան վարակեալ է :

Երբ տեսնես մէկն որ աղգային պաշտօնի կոչուելու համար հողի տալէ յետոյ ընդունելու համար նազ տիղ կ'ընէ, մի՛ ինդար ամենեւին, վասն զի աղգային հիւանդութիւն է :

Երբ տեսնես մէկն որ ձայնով ու գրչով գողալէ ու որոտալէ յետոյ՝ լեզուն քաշեր ու կծկտիկ եղեր լուկ քէֆը կընայի, մի՛ բարկանալ, վասն զի վարպետորդի մ'է, որ զիտէ իր վիճակը դառմանելու եղանակը :

Եւ երբ տեսնես որ այնպիսին յանկարծ երեան ելեր է, մի՛ դառմանար, այլ հասկցիր որ իր յիշատակները չէ կրցեր ետ թաղարմիշ ընել տալ :

Բայց, Ընթերցող, մի՛ կարծեր թէ աղգային հիւանդութիւններն այսչափ են :

Համբերութիւն ունեցիր, և մենք կը խօստանանք ամեն շարժ յաղեցնել քու հետաքրքրութիւնդ :

ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԻՍԻԹԻՆ

Ասում գնում երեսփոխան էֆէնտիին. - Հէնձ մի պնակ հալլա, որպէս զի անուշ տնէ :

Չոպա թէփէսի երեսփոխան էֆէնտիին. - Յըրըլտաի մը :

Սմինճի երեսփոխան էֆէնտիին. - Բուրվառ մը :

Կը բողոքեմքի երեսփոխան էֆէնտիին . - Չատկական կարմրուկ հաւկիթ մը :

Կը ձայնակցիմքի երեսփոխան էֆէնտիին . - Ձէնկին պախչիլի մը :

Բիթրիթ երեսփոխան էֆէնտիին . - Փըրչա մը :

Քնէտծ երեսփոխան էֆէնտիին . - Պէշիկ մը :

Իսկ Քէրթէնքէլէի կղզիի (քընալը) ամիրային . - Սամուր քիւրք մը :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԻ

ՅԱՆՈՐ զԱՎՈՐ

Քաղ. ժողովոյ անդամոց հրաժարելուն վրայ Հանդիսաւորք-Սպուշ էֆէնտին շատ քէֆլէնմիշ եղաւ : Կը հաւատան թէ այս գիշեր երազին մէջ տայըխամիշ է բըրթ թէ վառճճճապետ պիտի ըլլամ :

ԱՍԿԷ ԱՆԿԷ

Պատահանէ . - Քուղում տօքտօր էֆէնտի , քիշ մը կեցիր , վար գամտէ քեզի պան պիտի ըսեմ . -

— Բէգ աղէկ ամմա , ես իրէկճի չեմ :

Աշկտ լուս . Կիւլիկ հանում , խաղէդաներուն մէջ կարգացի քի ըէթին պաթալ պիտի ըլլայ եղեր . ինչալլահ քի ասկէ-եաքը աղէկ թիւթիւն կը խմենք . -

— Ինչալլահ քի պաթալ չըլլար տէ ես ալ նորէն խմելու չեմ վարժուիր :

Ան չէ ամա , քո մարդ , վախտը չանի , հապը կլլեցիր . -

— Շատոնց .

— Ե՞ր կլլեցիր .

— Չիյաե՞ս , քեզի հետ կարգուեւէս պերի :

ՊԵՂԱԳՆԱԳՆԵԼԵԱՆ ՊԱՊԱՆՈՐԱՆԵԼԵԼԷ

Սիրելի Բնթերցող ,

Այս տարւոյ (1887) զիւղադնացութեան տպաւորութիւնքը քիշ հաշորդելով կը փախալիմ հետաքրքրել զքեզ ընտանեկան կենաց այն հարցի մասին՝ որում շատ բան զոհել ստիպ-

ուած ենք և որ մեր կենաց տեղութեան մեծագոյն մասն , մեր ճակատագիրն կըսեմ , պիտի դրաւէ և կամ գըրուած է ալ :

Խօսքս մասնաւորապէս Հայ ընտանեկան կենաց կը պատկանի . օտարի կեանքը դիտ այնքան չը հետաքրքրեր և հետաքրքրելու ալ իրաւունք չունի . ինչ օգուտ օտար կեանքի հարցերով զբաղել . երբ մեր արեւնակիցներու կեանքն ունի բաղում տո՞ւր պատկերներ . . . այո՛ , սիրելի Բնթերցող , տո՞ւր պատկերներ . . . ցաւալի է խոստովանիլ որ հայ ընտանեկան կեանքը չը կըցաւ պահել իւր առաջուց ու նեցած սրբութիւնը . . . Խօսքս միայն դիւզերու համար չէ , այլ ընդհանուր Պօլսոյ հայոց համար , որովհետեւ դիւզողնացութիւնը պարզապէս ես նրկատեր եմ որպէս սիրահարաց հարմար մի ժամադրատեղի , և այս անհերքելի ճշմարտութիւն քիշ յետոյ պիտի սկսիմ ապացուցանել : (Նախանձելի բացատրութիւնները միշտ խոնարհաբար յարգելու պատրաստ ենք :)

Հայ կեանքը նկարագրելէ յետոյ՝ կուղեմ քիշ մ' ալ դիւզական ընդհանուր կեանքով զբաղել , դա անշուշտ յարգի Բնթերցողաց ձանձրոյթ չը պատճառէր , որովհետեւ նա ալ ունի իւր դրամաթիւքական պատկերներն . . .

Նախ սկսինք Աղգային դպրոցներէ , որովհետեւ դպրոց մը ժողովրդի յառաջադիմութեան ջերմագլուխն է :

Եէնի-մահալլէցին ունի աղգային նախակրթարան մը , որուն չէնքը խիստ խաղիւտ և անյարմար լինելէ ի վատ՝ վարձքով ալ բռնուած է . այս դպրոցի մատակարարութեան պաշտօնն կը հոգայ Պէշիկ-Տէրէ , Մէղար-Պուրնու և Եէնի-Մահալլէյէ կաղմըւած մի հոգաբարձութիւն և սոյն հարուստ երեք թաղերէ կազմուած Հոգաբարձութեան մէջ այնպիսի անգամներ կը գտնուին որք դպրոցի երես չը տեսած լինելէ զատ դպրոցի մը ինչ նշանակելն իսկ չեն գիտեր . . . և Եէնի-Մահալլէցւոյ աղգային նախակրթարանին գէլըյանձնըւած է այսպիսի հոգաբարձութեան մը ձեռքը :

Եթէ հոգաբարձութեան ողին համարուող մի քանի կարող և ժրջան անդամներ չը գտնուէին , այժմէն կա-

րելի էր դուշակել դպրոցին ամենատիւր վիճակն . այս անձանց և ուրիշ մի քանիներու շնորհիւն կարելի եղաւ այս վերջին օրերս միացնել աղգային նախակրթարանն Շալճեան դպրոցին , և այս կերպով թաղեցւոյ մէջէն խռովութեան և երկպառակութեան սերմերը անհետացան : Փախաքելի է որ այդ կարող անձինք շարունակեն իրենց պաշտօնն , որոնց շնորհիւ միայն ապագայ յառաջադիմութիւն մը յուսալի է , եթէ ոչ այլապէս հազիւ պըլ պըլացող այդ կրթութեան կանթեղն վերջին լոյսն արձակելով պիտի շիջանի . . .

Երբ դպրոցի սեմէն ներս ոտք կուխեցի , դիտ դարմանող առաջին պատկերն ընդհանուր կառավարին եղաւ . այս անձը իսկը ճանչնայի որպէս մի մանրավաճառ և երբեմն դատարկաչըլիկ , և այժմ , ո՛րչափ լիոնուած են ժամանակներն . վախան վկայեալ մանկավարժի մը , վախան վկայեալ դաստիարակի մը (ակնթը խօսի Ուսումնական խորհրդին : . . .) այսպիսի անձի մը ձեռք յանձնուած է ապագայ սերնդեան մը ճակատագրին : Յանուն մարդկութեան , յանուն դաստիարակութեան գործուած ոճեր մ'է այս . . . կարծեմ ա՛լ բաւ եղաւ այնքան խըրատներ որ այլ և այլ անձանց կողմէ այլ և այլ թերթերու միջոցաւ տըրուեցաւ մանկավարժութեան կարեւորութիւնն ապացուցանելու նպատակաւ , քիշ մ' ալ գործով ցոյց տանք մեր դաստիարակասիրութեան կարեւորութիւնը , մեր կրթասիրութիւնը : Յաւալի է այսպիսի միացեալ հարուստ թաղի մը մէջ նահապետական դրութեամբ շարունակող դպրոց մը տեսնել . . . որպիսի անտարբերութիւն թաղեցոյ կողմէ :

Աղգային նախակրթարանին երբեմն տիւր և այժմ մի քիշ ուրախալի վիճակն Բնթերցողաց ներկայացնելէ յետոյ՝ անձինք աղգայնոց ընտանեկան բարոյականին (խօսքս մասնաւորաց համար է) :

Սմեռահաւատարիմ և պատուաւոր երեցող ընտանեկաններ տոտ կատարեալ անտարբերութեամբ և ազատութեամբ ամեն տեսակ (կամաց կ'ըսեմ) հաճոյքներ կը վայելին ի բացակայութեան իրենց ամուսնոց . . . , ժա-

մադրութիւններ շատ են . սիրային վայրեր նոյնպէս . ուրեմն պարզ կամք մը միայն կը մնայ , այն ալ ունէին արգէն , գործը կարգին է , արդէն և կամ նաեւն պարտաւոր է առ ի շուրջ . . . :

Դիշերուան ժամը երեքէն վերջը Պաղար-Պաշին հեռանալով Թուրքաքի պարտէզին ստորոտը և քիչ մ'ալ անդին Գալարի ճամբուն վրայ եթէ գտնուիս (անշուշտ պատահմամբ) պիտի լսես համբոյրներու փոխանակման շշուկ մը և մեղմածայն խօսակցութեան փափուկը . եթէ համարձակութիւն ունիս՝ քիչ մ'իս մօտեցիր և ահա քեզ պիտի ներկայանան երկու սիրահարներ կամ տարփաւորներ՝ որք առանձնութեան մէջ դիշերուն մթութենէն օգուտ քաղելով՝ ամեն ինչ և համարձակ կը վայելեն . . . :

Դարձիր Պաղար-Պաշին , (տե՛ս ինչ սակարկութիւններ տեղի չեն ունենար այս հանրածանօթ և իւր անուան արժանի սիրավայրին մէջ) և նստէ . քաջաւարտ լաւթուրդա մուղիղա կը նշուազէ . մեծ մասամբ կ'ինքն են որ կ'ունենանք . այդ իրենց այրեցեալ սրտերու հովհարներն է , որովհետեւ սրտերու մէջ հրդեհներ կարծարծին . . . : Լաւ դիտէ և ուշ գիր . ամուսինը քովն է . բայց չը տեսնէր տխմարն այն ակնարկներն զորս իւր կ'ինքն կը փոխանակէ ուրիշի մը հետ . միայն ակնարկ չէ , այլ պարզապէս խօսակցութիւն մը . որոշումներ կը տրուին , ժամադրութիւններ տեղի կ'ունենան և հոսկ ուրեմն պարտաւոր կը փակէ վարդոյրը (կը զարմանամ թէ՛ չունեցածն ինչպէս կուտան . . .) :

Եւ անտի , շրջէ Պէտպէն վրայ . հոգ չէ թէ տիկին մը և օրիորդ մը թեիդ ուժգին զարկաւ . յառաջացիր , ամեն կողմէ հրաւերներ անպակաս են , եթէ կը համարձակիս՝ թեիդ միոյն ներկայացուր , վստահելով թէ չպիտի մերժուիս :

Արշալոյսը սկսած է , շողենաւներ իրենց սուր ձայները արծարծելով հըրաւէր կը կարգան առայր մարդս իրենց գործերուն սկսելու : Տիկին * * * ին ամուսինը իւր գործին , համար Պօլիս իջաւ . առջի դիշերուան պատուոյ խոստման համեմատ կառքն պատրաստ է չուելու ի Բէսթանէ և ի Չըբլէր աստիւղ , հոն կեր ու խում և խնդում . . . :

Ուրիշ զոյգ մը նաւակ նստած կը

թիալարեն Վաստիորի հանդարտ ջուերն ճեղքելով և հանգիստ կ'առնուն դէպի Օլուա փէր և հոն նոյնպէս կ'սկսին սերահել Սէրայ Կերանալիէն :

(Ծարանակէն)

Ա. ՅԱՐԷՆ

Իմա Հայրենիք , Ձեր յարգոյ Բնութեցողաց՝ բացարդակ մահկանացուաց՝ հոգւոց աշխարհին վերայ աւելի մօտէն տեղեկութիւն հաղորդելու նպատակաւ կը փութամ հրատարակել այն նամակներն , որք երթեկեկած են մարմնաւոր աշխարհէս ի հոգեւորն և հոգեւորէն ի մարմնաւորն :

Նոյն թղթակցութիւնը տեղի ունեցած են երկու բարեկամաց միջև , յորոց մին՝ բնակիչ մեր այս աշխարհին և ինձ ծանօթ , ու միւսն 18 տարի առաջ զուր մահկանացուն կնքած՝ և այժմ բընակիչ հոգւոց աշխարհին , առաջինն տղնուօրէն ինձ կը զրկէ երկրորդին հետ փոխանակած նամակներու պատճեններն , զորս ազդողուտ Հայրենիքիդ կը յղեմ ի հրատարակութիւն , որով ծառայութիւն մը բրածնին կը համարիմ այն աղնիւ և բարի հոգիներուն . որք անգութ մարմնոց մէջ բընակելու դժբաղդութեան մասնուած են :

Այո՛ , պէտք է որ այս աշխարհ կամ կենցաղն , օր ըստ օրէ հանդերձելոյն հետ զիտական հրաշալի միջոցներով յարաբերութեան մտնայ , ու այսպէս տակաւ առ տակաւ վերցուն այն ատելութիւնքն , որոնք սցսօր , տարաբաղդարար , տիրած են հոգւոց և մարմնոց միջև :

Թաթուլի փառք չէ , եթէ յիշաւ ինքն իւրօրանն սկզբնապատճառ լինի այս նոր կարգադրութեան , որով ուշ կամ կանուխ հոգւոց և մարմնոց աշխարհներն իրարու պիտի մօտենան ի հաշտութիւն և ի զրկախառնութիւն , այնպէս որ օր մը դոցա բնակիչք կըլլան մի հօտ և մի հովիւ , յայնժամ տիեզերական երջանկութիւն կատարեալ է ի մարդիկ :

Մարմնաւոր բարեկամիս նամակն անդրանիկն է զսկսած ի հանդերձեալ աշխարհին :

ԱՆՈՒՇԱԽԱՆ

Թիւ 1 .

Առ լուսատեւիլ և վաղամեռիկ եղբօրորդին իմ Դանիէլ ,

Ի հանդերձեալ աշխարհ և այլն :

Վաղամեռիկ սիրելիս ,

Տասն և ութ տարի կը լինի , որ Աստուծոյ հրամանաւ աշխարհէս մեկնեցար , թող տալով քու ամենահաւատարիմ կողակցն . ազգականները , և բարեկամներն , ի մի բան՝ զաշխարհս ողջոյն : Մենք ամենքս ալ քեզ շոտ կարօտած ենք և կը փափաքեմք , որ դոնկ երազի մէջ երբեմն մեզի ի տես դաս և կամ աւելի աղէկ է նամակ դրես տեղեկութիւնք տալով այդ աշխարհին վերայ :

Սպասելով սպասելով համբերութիւններ հատաւ և տակաւին երկտող նամակ մը անգամ ձեռնէ ընդունելու բաղքն չունեցանք . ուստի պարտաւորեցանք սոյն նամակս այս մեղաւոր աշխարհէն դրել առ ազնուատեւիլ հոգիդ , որ եթէ կը ցանկայ մեր վիճակէն հարցանել , փառք երկնից , մինչև դրեալ դոցա Աստուծով ողջ և առողջ եմք և ձեր Աստուծամեծ աղօթից օժանդակութեամբ բաւական յաջողութեան մեջ , միայն թէ կողակցնիդ ձեր երթալէն վերջ դերեզմանիդ վերայ չտրուազանց ողբալէն հիւանդացաւ և եթէ Դամիանոս անուն անարժաթ բժիշկն չուտով ու աներեւութապէս չ'հասնէր յօգնութիւն , այժմ իւր սրտի ցաւէն եկած և զձեզ դժտած էր . այսու անմենայնիւ՝ ուրախ եմ յայնելո թէ 17 տարի կը լինի որ իւր առողջութիւնը դտած է և տակաւին այրի մնալու ուխտն պահած է ու պիտի պահէ յ'վերջ :

Ազնուատեւիլ Դանիէլ , շատ դուք եմ խնայել ձեր լուսահոգութեան նաեւ թէ քու աներ Օհան աղան քսակէն մարմարոնէ մահարձան մը կանգնել տուաւ դերեզմանիդ վերայ , այնպէս որ մահմիշդ մինչև ի կատարած աշխարհի և կամ մինչև ի դաւուսան Գրիգորի իւր տեղին խըլլալի չ'կարէ :

Նոյնպէս 1878 մայիս 25 եղբայրդ Կալոս յամուսնական աշխարհ մտաւ և այժմ երկու հաս զաւակ ունի , Կլորիկ ու Ոլորիկ , առաջին մանչ է և վերջինն աղջիկ . սոյն նամակս դրած ատենը քովիս նստած էին և երկու ձեռքերնիդ կը պաղնէին կարօտիւ և կը փափաքին եթէ ոչ զձեզ տեսնել՝ դոնէ նամակնիդ ընթեռնուի :

Մեծ էն յ' փոքր զվաղամեռիկ Դանիէլդ կը բարեւեն և հառաջանօք տխ կը քաջեն . վասն զի քանի՞ թանկէ այն նամակն որ հանդերձեալ կամ յաւիտեական աշխարհէն կուգայ , և դրուած հոգի մը և մարմնոյ աչաց անտեսանելի էակի մը ձեռամբ :

Նամակիս պատասխանին մէջ խնկեցէք (չնորհք ըրէք) ձեր հասցէն նշանակել , իսկ մերն արդէն ձեզ ծանօթ է :

Մնամ քոյդ

Ե ԶԵԿԻԷԼ

Սորա պատասխանեոյ պատճենն երբ ձեռքս հասնի , կը զրկեմ ազդողուտ Հայրենիքիդ ի հրատարակութիւն :

ԱՆՈՒՇԱԽԱՆ

Ի Ր Ա Տ Մ Ը

Արեւելի Պ. Հրանդին՝ Զբօսանաց հեղինակին , սրպէսպի իւր դբօսանաց թեթեւութեամբ նիւթ չ'ընարէ այնպիսի խնդիրներ , որոց վրայ խօսելու համար մարդ մեծ համար թիւն պարտի ունենալ :

Թո՛ղ ներքէ մեզ ըսելու թէ մենք իւր կարողութիւնը չենք գիտեր, բայց գիտենք թէ ո՛վ է և ի՞նչ հմտութիւն ունի Տեղեւորայ թարգմանութիւնները բաղդատողն՝ Յ. Թ.

Պ. Հրանդ լաւ կ'ընէ եթէ անոյ մեր խրատին, յարժամ հարկ չ'ընար կրկնել իրեն Ապիղէսի սա պատասխանը թէ՛

«Մի ի վեր քան զկոչիկդ, ո՛վ կոչկալար» :

ՊԱՏՈՒԱՆՃԱՆ

Վեհ. Սուլթանն բարեհաճեցաւ նշուիրել Տառեան Վսեմ. Յարութիւն էֆէնտիի Իմթիյալէ Էֆէնտի անուն պատուանշանը, զոր հաստատած է մեծանուն Սուլթան Մահմուտ Բ. և զոր կրած են ն. Վսեմութեան մեծ հայրը, իւր հայրն՝ երջանկայիշատակ Յովհաննէս պէյ և իւր մեծ եղբայրը՝ հանդուցեալ Մուսթաֆա պէյ Տառեան :

Յիշեալ պատուանշանէ խիստ քիչ երու միայն տրուած է :

Մեծաւ գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանն բարեհաճեցաւ Տիգրանակերտի երեւելիներէն Մինասեան Մեծ. և Սղգաւէր Յովհանն

նէս էֆ. ի Գ. կարգի մէճիտիէ պատուանշան շնորհել

Կայս. պալատան բժիշկներէ Մեծ. Տօրթ. Մ. Բ. իւթիւճեան էֆէնտի որ Վեհ. Սուլթանին այլեայլ շնորհացն արժանացած է, այս անգամ Փարիզու մանկանց առողջապահական հանգիստն վարչութեան անգամ ընտրուել և այս առթիւ օսկի շքադրամատներ է :

Ա Ս Տ Ի Ճ Ա Ն

Տիւրքիկ երեւելի աղգայիներէ Հայրենեան Մեծ. Կարապետ էֆէնտիի Սալէէ Բ. աստիճան շնորհուեցաւ :

Հայրենեան էֆէնտի առ բարեխընամ տէրութիւնն և առ Աղգն օգտակար ծառայութիւններ մատուցած է երկար տարիներէ ի վեր. ուստի իրաւամբ արժանի եղած է Վեհ. Սուլթանին շնորհացը :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը վաղը, սեպտ. 26, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ տօնախմբութեանն առթիւ պիտի պատարագէ անդ :

— Ամեն. Խրիմեան Սրբազան ալ վաղը Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին Պատարագ պիտի մատուցանէ վասն հոգւոյ ողբացեալ Օտեան էֆէնտիի :

— Գոհ ենք որ Պատկ. Կրօն. Ժողովն ինկատ առնիմ մեր առաջարկն՝ որոշած է Դերձակեան Գեր. Սրիստակէս Սրբազան և Տիգրանակերտի երեւելի աղգայիներէն Մինասեան Մեծ. Յովհաննէս էֆէնտին իւր ներկայութեանը հրաւիրել տեղւոյն արդի վիճակին նկատմամբ ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու համար :

— Գոհ ենք նոյնպէս որ յիշեալ Ժողովն իր ներկայութեանը կոչելով կրկնակին Միհրան Սարափեան անուն անձը՝ զորմէ դրած ենք, վերջին աղգարարութիւն ըրեր է :

ՉՄԻՒՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(13 թուի)

Հապա ինչ ըսեմ խել մը շուկատներուն. մանաւանդ՝ Իզմիրի Էնթուֆէն,

— 456 —

բոյ տկար խմացականութիւնն ևս քան զեականգորանար. — սակայն ի՞նչ է պատճառն որ վաղը մեկնիլ կուզես և ոչ ուրիշ օր :

— Որովհետեւ, քանի որ այս բաժանումը տեղի պիտի ունենայ, պէտք է որ կարելի եղածին չափ շուտով կատարուի, յայտ հետէ օր մ' իսկ աւելի չեմ կրնար կենալ այնպիսի տան մը մէջ՝ յորում ինձ հետ այնպէս կը վարուին ինչպէս հարօս վարուեցաւ հետո : Պէտք է որ մտադրածս արութեամբ յանձն առնուի, և եթէ կը հաճիս որ Մարիան...

— Լաւ ուրեմն, թող մեկնի : Աղջիկս, քոյրս, բարեկամս, աթենքդ ալ երեսի վրայ թողէք զիս : Զիս ալ ձեզ ալ ստատանան տանի. — գոչեց հեզ անձն՝ մատնեալ աճեցուն ուշաթափութեան մը՝ որ իսկայն ուժով սկսող ջերմ տենդի մը դառանցնք կը դառնայ : — Արժանի էի այս բաներուն : Արժանի էի, արժանի. — յաւերցուց հոս հոն ըշտապաւ քալելով դաժան դիմօք : Տիւրք մ' եմ ես, թրջած հաւ մը, կամք չ'ունեցող, սիրտ չ'ունեցող, քաջութիւն չ'ունեցող աղուշ մը : Եւ դու կը տեսնես. — և կուրծք ցոյց տալով իւր կնի՞՞ որ ամուսնոյն մտաց այս խան

— 453 —

խօսին, — քանի որ ձեզ համար՝ ձեր աղջկան վանք կամ իմ քոյս գտնուին տարբերութիւն չ'ունի :

— Անշուշտ, օրիսրդ, ըստ որում Մարիան ձեզ հետ ապրել նախամեծար կը համարի քան մեզ հետ, աղատ է մենէ բաժնուելու :

Ո՛հ, յանցանքն մերն է, — զոչեց հեկեկելով պարօն ժուֆրուա, — յանցանքը մերն է, մենք բոլոր նախապատուութիւնը Օռէլի տուինք... և իւր քոյրն ոչ ևս զմեզ կը սիրէ... կը բաժնուի մենէ : Աստուած իմ, — և իւր արտասուածութեամբ երեսն իւր ձեռաց մէջ ծածկեց. — Այս վերջին հարուածին չ'էի սպասեր... չը պիտի կրնամ գիմանալ...

— Եղբայր իմ, խնդրեմ, Մարիանայ բաղձանաց պատճառն սխալ մի մեկներ. քեզ և մօրն նկատմամբ ունեցած գորովն, ձեր Օռէլի տուած նախապատուութիւններով և ոչ մի փոփոխութիւն կրած է և իւր նախկին սիրով կը սիրէ Օռէլին. խեղճ աղան սա կը մատնէ միայն թէ՛ այդ ծանուցեալ ամուսնութեան կատարմամբ անպատճառ այնպիսի ընկերութիւն մը պիտի ունենար, յորում ինք չատ անպատշաճ պիտի երեւայ :

որ հոս Մեղիսեղ Սրբազանի շահատա-
կութեաց փողոցի փողարն է, և իրեն
նման քանի մը հետևորդներով կրակ
ու բոց կ'արձակէ չորսդէի. սակայն
'ի չնորհս այդ պաշտպանութեան դոր-
ծին՝ յաջողած է կարեւոր վարժարանի
մը մէջ պաշտօն առնուլ և հաց ճարել,
վասն զի այդ կուսակցութեան խմբա-
պետը, որ ժամանակաւ պետ էր նաև
ուրիշ օճակի մը, բարեհաճած է իւր
հովանաւորութեան ներքեւ առնուլ
դայն:

Աւելորդ է կարծեմ հոս խօսիլ այդ
և ատենց նման պարագաներու վրայ՝
որը արդէն ծանօթ են ամենուն և
միայն կը խնդացնեն զմեզ ինչպէս նաև
մեզ հետ բոլոր ողջամիտ Հայերը:

Սակայն, դալով հանրագորոյն ա-
ռիթ տուող խնդրոյն, որ բոլորովին
խճողուած և ալլափոխուած կերպով
կը ներկայանայ հրապարակի վրայ
իւր կուսակցաց կողմէ՝ պարտք կը դնէ
մեր վրայ քանի մը խօսք ընել հըրա-

Ո՛վ որ լսած է Յսայեանց անունն
պարակաւ:

'ի Զմիւռնիա կամ կը ճանչեն դայն, ան-

հընար է չխոստովանի թէ ինչ լաւա-
գոյն և բարեսէր անհատներէ կը բաղ-
կանայ անոնց ընտանիքն և չկայ իզմիրցի
կամ օտարական մը որ այդ դաւառին
մէջ անոնց բարիքն վայելած չըլլայ. և
բաց աստի, իզմիրի պէս թուով սա-
կաւ Հայերու մէջ 180 ընտանիքէ ա-
ւելի անհատք ամենամեծ վայելչու-
թեամբ կ'ապրին 'ի չնորհս Յսայեանց
վաճառատան ընդարձակ գործերու,
հետեւաբար Յսայեանք եթէ ու-
ղէին ստոր միջոցներով հանրագորու-
թիւն բանալ և ստորագրութիւն ժող-
վել, իզմիրի բոլոր Հայ հասարակու-
թեան մէջ 80 հոգի չէր գտնուեր որ
մերժէր և կամ թէ, եթէ ուղէին
դՄեղիսեղ միանգամայն միշտ հեռա-
ցնել այդ դաւառէ, իրենց մէկ խօսքը
բաւական կ'ըլլար բոլոր ժողովուրդը
տաք հանելու, և դայն ուրիշ կերպով
Պօլիս ճանքելու:

Առ այս պիտի խօսինք ուրիշ առ-
թիւ. բայց յաւելցնենք թէ Մեղիսեղ
Սրբազան արդեօք իրապէս պատուա-
բեր կը համարի՞ այն միակ վկայութիւն

զոր տուած է ձերիտէի Շարդիյէի մէջ
Մէնէմէնէ Մատուր Հաթափեան թըղ-
թակցութիւններ հրատարակելով. ա-
հա հոն Մեղիսեղ Սրբազանի ամեն
արժանիքն երևան կ'ենէ. . . ու մենք
իսկ իրաւունք կուտանք: Այդ հան-
րածանօթ Հաթափեղի ինչ կարծեմ եր-
կու տարեկան տղեկ մ'անդամ չկայ
որու ո՞վ ըլլալն չգիտնայ. . . :

ՊԱՐԳԵՒՍԻՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՍ ՔԱՋԻԱԼԱՐԸ

Թարգմանիչ Հրատարակիչ
Յ. Թ. Օ. Լ. Ա. Ե. Ա. Ն. Կ. Պ. Գ. Ե. Բ. Ա. Ն.

Այս վիպառանութեան Ա. հատորը
լրացած և Բ. հատորն սկսուած է հը-
րատարակիլ:

Տնօրէն Է. Խմբագիր Արտօնատէր
Մ. Գ. Ա. Մ. Ա. Տ. Ա. Ն. Մ. Յ. Մ. Ե. Բ. Ա. Ն.

Տղարկութիւն Կ. Պ. Պ. Բ. Ա. Ն.
Կ. Պ. Պ. Բ. Ա. Ն. Պ. Գ. Ե. Բ. Ա. Ն.:

— 454 —

— Կիմանա՞ք, կինս, ահաւասիկ քու յի-
մար վառասիրութեանդ հետեւանքներն. —
դոչեց պարոն ժուֆրուա դասնութեամբ, վո-
խանակ երանութեամբ և խաղաղիկ մեր վի-
ճակակից անձանց հետ ընտանեօք ապրելու,
կ'ուղենք բարձր դասակարգի մէջ մտնալ, սը-
նախառութիւնն խելքդ գլխէդ առած է, և այ-
սուքոյր, աղջիկ, բարեկամ մեզ երեսի վրայ
կը թողուն:

— Եղբայր իմ, երեսի վրայ չը պիտի թո-
ղունք դրեղ, կը յուսամ որ յաճախակի դի-
րար պիտի տեսնանք, խիստ յաճախ:

Այսպէս ուրեմն, կը հաւանի՞ս որ Մարիա-
նըն հետս տանիմ:

— Ի՛հ, Տէր իմ Աստուած, յետոյ այս
խնդրոյն վրայ վերստին կը խօսինք. այս իրի-
կուն խելքիս տէր չեմ. . . դեռ հիմայ աչերս
միթաղնեցան. . . արիւնն պիտի խեղդէ զիս
վերջապէս. . . Ընկճեալ եմ. . . Սակայն մէկ
օրուան մէջ այսքան վիշտ չա՛տ է:

— Բարեկամս, հաւատաւ ինձ թէ՛ քու
Մարիանայ նկատմամբ տալիք որոշումդ իմա-
նալու համար քեզ երկար տտեն թախանձել
չատի կը նստի ինձ, զի վաղն իսկ դիտաւորու-

— 455 —

թիւն ունիմ ձեր տունէն դուրս ելնելու:

— Իմ մէկ ամենամեծ բաղձանայս իրա-
կանացման լուրը կուտար ինձ, օրիորդ, —
ըսաւ տիկին ժուֆրուա զսպեալ զայրացմամբ
մը. — Այս խօսքերն մեր մէջ անցնէ՛ յետոյ
կամ դուք պէտք էր որ դուրս ելնէիք աս-
կէ, կամ ես:

— Այնպէս պիտի ընեմ, տիկին, և նոյն
իսկ վաղն կը. . . կրկնեմ ձեզ:

— Վա՛ղն. — հարցուց պարոն ժուֆրուա
յապուշ կրթեալ, Բախտանս, միթէ կարելի
բա՞ն է այդ: Մտիկ ըրէ խօսքիս, գլխով ինչ,
մտիկ ըրէ խօսքիս:

Որոշած էի վաղն այս տունէն մեկնիլ,
և վաղը պիտի մեկնիմ. կնօղդ այն խօսքերէն
յետոյ դուրս քիչ յաւաջ լսեցիր՝ ոչ ևս կարե-
լի է ինձ համար հոս կենալ. արդէն քիչ յա-
ռաջ մեր եղբայր Բուսէլէն խնդրած էի որպէս
զի առժամանակեայ կերպիւ Գօլի դաւթին
մէջ՝ ուր ֆօռթիւնէ կը բնակի՝ կահաւորեալ
սենեակ մը վարձէ մեզ համար:

— Վա՛ղն, Աստուած իմ, վաղը քենէ
բաժնուիլ: Արդեօք կ'երազեմ, արդեօք ե-
ղածն ստոյգ, է դոչեց պարոն ժուֆրուա ո-